ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«02» 09 2011թ. N: 286-Ա գ.Գյումրի

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ 5Ա ՇԵՆՔԻ ԹԻՎ 2 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ 1-ին թաղամասի 5ա շենքի՝ որպես պետական սեփականություն, անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 2006 թվականի հունիսի 14-ի թիվ 1952550 վկայականը, հաշվի առնելով Գյումրու քաղաքապետի 2003 թվականի փետրվարի 26-ի թիվ 161 որոշումը, ղեկավարվելով «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 5-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի «Աղետի գոտու վերականգման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված պետական բնակարանային ֆոնդի բաշխման և 1999թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 1935-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 22-ի «Աղետի գոտում երկրաշարժի հետևանքով վթարային դարձած և պետական միջոցների հաշվին ամրացված շենքերի բնակարանների բնակեցման մասին» թիվ 116 որոշման 2-րդ կետի դրույթներով.

Աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված և Գյումրու քաղաքապետի կողմից հատկացված Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ 1-ին թաղամասի 5ա շենքի թիվ 2, 2 սենյականոց բնակարանն անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքել ներքոհիշյալ քաղաքացիների հետ՝

Սահակյան Լիանա Վարազդատի,
Աբդալյան Արման Անդրանիկի,
Մարտիկյան Ավետիք Գևորգի,
Աբդալյան Անիտա Անդրանիկի,
Աբդալյան Միշել Էդուարդի:

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է